Ալեքսանդր Ծատուրյան

Դարեր եկա՛ն . . .

Դարեր եկա՞ն, դարեր անցա՞ն,
Բայց դու հիվանդ, ուժասպառ.
Քո վերքերը չամոքվեցան,
Իմ բազմատանջ հայ եղբայր:

Երկինք հասավ սրտիդ մորմոք,
Քարը ճաքե՞ց քո լացից.
Լսե՛ց աշխարհ... Բայց քեզ ոչ ոք
Չեղավ անկե՞ղծ կարեկից:

Որպես բախտի մի խորթ զավակ.
Մոր զգվանքին կարոտած.
Դա քամեցի՛ր վշտի բաժակ.
Սրտիդ արյուն, աչքիդ լաց .

Մանուկ օրից տեսա ես միշտ
Փշյա պսակ քո ճակտին.
Կյանքիդ ընկեր ցավեր ու վիշտ
Կյանքիդ երկինք միշտ մըթին:

Եվ այսօր էլ քեզ տեսնում եմ,
Դու դարձյալ խեղճ, դու անտեր,
Հոգիս մռայլ՝ արտասվում եմ,

Երգում խորունկ քո վերքեր:

Բայց, ա՜խ, իմ թույլ, հիվանդ եղբայր.
Քո խոր խոցերն երգելու
Թույլ է իմ ձայն, թույլ իմ քընար,
Անզոր և՛ խոսք, և՛ լեզու: